

Հայտարարություն ՀՀ Սյունիքի մարզպետարանը հրապարակում է սույն հայտարարությունը փորձագետ ներգրավելու վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է Mulberry 2,0 ծրագրի ներդրման իրականացման և վերահսկման աշխատանքների համար փորձագետ ներգրավելու մասին:

Աշխատանքների համառոտ նկարագիրը.

Փորձագետը ապահովում է շահագործվող Mulberry 1,3 էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգն նոր Mulberry 2,0 տարբերակով փոխարինելու աշխատանքները և ծրագրի հետագա շահագործումը:

Փորձագետ ներգրավելու ժամկետը` Պայմանագիրը կնքվում է վեց ամիս ժամկետով:

Փորձագետի պարտականությունները` իրականացնում է նոր` Mulberry 2 ծրագրի ներդրումը, ծրագրի սպասարկումը և օգտվողների ուսուցանումը:

Փորձագետին ներկայացվող պահանջները`

- ունի բարձրագույն կրթություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- Mulberry 1,3 և Mulberry 2 էլեկտրոնային փաստաթղթաշարժի ծրագրերի իմացություն:

Վարձատրության չափը` Պայմանագրային:

Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փառոճաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած` նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ (ք. Կապան, Նժդեհի 1,) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

- գրավոր դիմում (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճեն (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- արական սեռի անձինք` նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն` բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ գունավոր լուսանկար` 3x4 սմ չափսի.
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան, անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9:30-ից մինչև 12:30-ը բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ (0285)44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է` 20/12/2018թ.: